

ԱՄԵՆ. Ս. ՊԱՏՐԻԱՐԲ ՀՕՐ ՊԱՏԳԱՄԸ

Ս. ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏՕՆԻ ԱՌԻԹՈՎ

**«Եւ նոքա ասեմ ցնա, կիմ դու, զի լաս: Ասէ ցնոսա, զի բարձին զՏէրն իմ ի Գե-
րեզմանէ աստի, եւ ոչ գիտեմ ուր եղին զՆա»:**

(Յովհ. 20:13)

Գարնանամուտի Պասեքի առաւօտեան աղջամուղջին, Մարիամ Մագդաղենացի կանգնած իր սիրելի Վարդապետի գերեզմանի մուտքին կու լար դառնօրէն: Հրեշտակները հարցուցին անոր. «Կին դու, զի՞ լաս, զո՞ խնդրես»: Աստուածորդին եւս նոյն հարցումը պիտի ուղղէր Մագդաղենացիի, որուն ան պիտի պատասխանէր հեկեկալով, «Զի բարձին զՏէրն իմ ի գերեզմանէ և ոչ գիտեմ ո՞ւր եղին զՆա»: Ու այս հարցումը սիրելի հաւատացեալ քոյրեր և եղբայրներ, դարերու մէջէն մեզի հասած, նաեւ արձագանքն է միլիոնաւոր սիրտերու, որոնք զրկուած են իրենց ամենաթանկագին ու սիրելի բանէն: Որքա՛ն յաճախ անզգամ ձեռքեր և անդիմագիծ ոյժեր կը փորձեն խլել ու հեռացնել մեզմէ մէկը՝ որուն ձայնն ու ներկայութիւնը կը լուսաւորեն և իմաստ կու տան մեր կեանքին ու մեր գոյութեան:

Իւղաբեր կիները, որոնք 2000 տարիներ առաջ, Զատիկական արշալոյսին եկած էին իրենց Տիրոջ գերեզմանին այցի, բարեպաշտ ու իրենց Վարդապետին նը-
ւիրուած կիներ էին, որոնք Պասեքի առաւօտ գացած էին գերեզման, համաձայն Հրէական սովորութեան անուշահոտ իւղերով օծելու իրենց Տիրոջ մարմինը: Այս կիները անպայման ականատես եղած էին Աւագ Ուրբաթ օրուան այն սարսափելի պատահարներուն: Անկասկած, անոնք նաեւ գտնուած էին Պիղատոսի պալատի մուտքին և լսած թէ ինչպէս Պիղատոս հրահանգած էր որ մտրակէին ու շարձարէին զինք: Անոնք տեսած էին թէ Աստուածորդին ինչպէս խաչը ուսին դուրս կը բերուէր պալատէն պատեհապաշտ բազմութեան պողտութիւններուն և հայհուլներուն մէջ: Անոնք հետեւած էին այդ տխրահամբաւ թափօրին, որ պիտի գար կանգ առնելու Գողգոթայի բարձունքին, ուր և հոռմէացի զինուորներ զինք խաչ պիտի հանէին: Աստուածամայրն ու միւս վշտակիր կիները իրենց ցաւին մէջ իրար յենած, դիտեցին ու տեսան խաչելութիւնն ու մահը իրենց զաւկին և սիրելի Վարդապետին, ապա մի քանի ժամեր ետք երեկոյեան, որոջ հեռաւորութենէ հետեւելու Յովսէփ Արեմաթացիի և մի քանի ուրիշներու, որոնք իրենց Տիրոջ մարմինը խաչէն իջեցնելով պիտի տանէին ու դնէին գերեզման:

«Տիրոջս մարմինը տարած են»: Անձկութեամբ լեցուն այս խօսքերը արտա-
սանելով, Մարիամ Մագդաղենացի, տակաւ բացուող արշալոյսի արեւու շողերուն մէջ կը տեսնէ մարդու մը ուրուագիծը, և խորհելով թէ պարտիզպանն էր, կը կրկնէ. «Տիրոջս մարմինը տարած են» խօսքը, որուն կարծեցեալ պարտիզպանը կը պատասխանէ ըսելով. «Մարիամ»: Իր յուսահատ և շուարած վիճակին մէջ երբ Մագդաղենացի կը լսէ իր անունը արտասանուած այնքան մեղմ և սիրով, անմիջապէս կը ճանչնայ իր Վարդապետը, ու իր կարգին կը կանչէ, «Ռաբբունի», «Վարդապետ»: Եւ Մարիամի վիշտը երկվայրկեանի մը մէջ կը վերածուէր աներեւակայելի ուրախութեան, որով-
հետեւ անմիջապէս ան կ'անդրադառնար ու կը համոզուէր, որ իր հետ խօսողը ուրուական մը, ոգի մը չէր, այլ նոյն ինքը՝ Քրիստոս, իրենց սիրելի Վարդապետն ու Փրկիչը:

Եւ այդ համոզուած ձայնին վրայ էր, որ քրիստոնէական հաւատքը կու գար դնելու

իր հիմերը: Մագդաղենացիի և անկէ ետք միւս առաքեալներու իրա՛ւ և բուն կեանքին հետ դէմ առ դէմ գտնուելուն պատճառաւ էր, որ յաջորդ դարերու քրիստոնեաներ պիտի կարենային տեսնել մահուան ողբերգութենէն և ցաւէն անդին: Առաւօտեան արշալոյսին Մագդաղենացի Մարիամի հետ խօսողը նոյն Յիսուսն էր, որ հասկցած էր զինք, ու շահած անոր հաւատարմութիւնն ու նուիրումը: Եւ զինք վեր հանած իր կեանքի գոհիչներէն, այն նո՛յն Յիսուսը, որ Փարիսեցի Սիմէոնի տան մէջ ընդունած էր անոր անուշահոտ իւղի նուէրը, խումբ մը դժգոհներու քթմնջանքին մէջ:

Այսօր, սիրելի հաւատացեալ քոյրեր և եղբայրներ, քրիստոնեայ աշխարհը իրար աւետելով Յարութեան հրաշափառ տօնը, կ'ըսէ. «Քրիստոս յարեալ ի մեռելոց», մինչ 2000 տարիներ առաջ այս առաւօտ, Մարիամ Մագդաղենացի կ'ըսէր. «Ես Տէրը տեսայ»: Անշուշտ Աստուածորդուն Մագդաղենացիէ աւելի մօտ եղող առաքեալներ և անձեր կային, որոնց կը տարուինք մտածելու թէ այդ բացառիկ պատիւը պէտք էր ընծայուէր, սակայն անոր կու գար արժանանալ ընկերային շրջանակի մէջ վատ համբաւ ունեցող և անտեսուած կին մը, Մագդաղենացին՝ որուն կը տրուէր այդ պատիւը, տեսնելու Տէրը:

Մենք այսօր, իբր քրիստոնեաներ, մէկ բան պարտինք լաւ ըմբռնել, թէ Յարուցեալ և երկինք համբարձած Փրկիչը չէ՛ այն Աստուածորդին ու Փրկիչը, որ երկինք բարձրանալէ ետք խզեց իր կապը այս աշխարհին հետ: Մեզմէ ոմանք նոյնիսկ քիչ մը աւելի առաջ երթալով կ'ըսեն թէ Գալիլիոյ լճակին ու լեռներուն, ինչպէս նաեւ Երուսաղէմի փողոտ ճամբաներուն վրայ քալող Քրիստոսը նոյնը չէ, ինչ որ կը ներկայացուի մեզի այս օրերուն, իբր սրբապատկեր մը միայն: Զատկական այդ առաւօտ Մարիամ Մագդաղենացիի առաքեալներուն տուած աւետիսը բոլորովին տարբեր էր, «Զի տեսի զՏէրն», ան կը խօսէր ապրող ու շնչող և անհուն բարութեամբ լեցուն մէկու մը մասին, խորհրդաւոր՝ սակայն միաժամանակ ճշմարիտ լուր մը: Մենք այսօր կը տօնենք յիշատակը ո՛չ թէ հեռաւոր անունի մը և կամ դէպքի մը, այլ յիշատակը Յարութեան Անոր՝ որ խօսեցաւ Մագդաղենացիի հետ, և անկէ ետք տակաւին պիտի յայտնուէր ուրիշ առաքեալներու: Եւ այսօր մենք՝ քրիստոնեաներս, բոլոր ժամանակներէ աւելի պարտինք Մագդաղենացիի նման յանկարծ անդրադառնալ, թէ մենք ամբողջ անցնող դարերու ընթացքին պարտիզպանի մը հետ չէ որ խօսած ենք ու կը խօսինք, այլ մեր Փրկիչին՝ Յիսուս Քրիստոսի հետ, որ ողջ է ու կ'ապրի և պիտի ապրի յաւիտեան:

Կեանք կամ մահ, ահա այս է պարզ հարցումը զոր Աւագ Ուրբաթն ու Զատիկը կու տան մեզի: 2000 տարիներ առաջ, Աւագ Ուրբաթ օրով Իսրայէլի կրօնական և քաղաքական ղեկավարները միացած խաչի մահուան դատապարտեցին Աստուածորդին, և տակաւին մինչեւ այսօր մենք նոյնն է որ կ'ընենք, Տէրը դուրս թողլով մեր կեանքերէն: Մարդ արարածը միշտ հակամէտ է ապրող ու շնչող բաներ փնտռել մեռելներու մէջ: Մենք բոլորս կ'ուզենք լաւ ապրիլ, սիրուիլ և վայելել կեանքի քաղցրութիւններն ու բարիքները, և ո՛ր կը փնտռենք այդպիսի կեանք մը: Եթէ մենք հետեւինք մեր մարդկային բնազդին, այդ բոլորին կը նայինք սխալ տեղերու մէջ. մենք կեանք կը փնտռենք այնպիսի տեղեր ուր կեանք չկայ, և այդ մեռած բաներէն մին՝ դրամն է, որովհետեւ մենք միամտօրէն կը տարուինք մտածելու թէ դրամը ի զօրու է մեզի տալու մեր սրտին բոլոր ցանկացածները, երջանկութիւն, սէր, ճոխ կեանք, առողջութիւն, և այլն:

«Զի՞ խնդրէք զկենդանին ընդ մեռեալս»: Ի՛նչ ողբերգութիւն ենք մենք՝ մարդ արարածներս: Ամբողջ հազարամեակներ փորձած ենք կենդանին, ողջը փնտռել մեռած բաներու մէջ: Մեծ ցանկութեամբ նայած ենք դրամին, հաճոյքներուն, ոյժին և նոյնիսկ պատերազմներու, և ի՞նչ է եղած արդիւնքը: Ասոնք մեզի իրաւ կեանք չեն պարգեւած, ընդհակառակը, աշխարհ տակաւին կը տուայտի անորոշութեան և սարսափի մէջ: Մենք կրնանք շարունակել կեանք փնտռել անշունչ բաներու մէջ,

սակայն վստահ եղէք, որ Երկնաւոր Հայրը իր կարգին պիտի թոյլ տայ որ մենք մեր անձնական փորձառութեամբ գտնենք թէ մեր կեանք կարծած իրերը շատ հեռու են մեզի իրա՛ւ կեանք պարզեցելէ:

Աւետարանին խօսքերը կու գան այսօր մեզի ըսելու թէ Աստուածորդւոյն հրաշափառ Յարութեան իրողութիւնն ու ճշմարտութիւնը աւելի զօրաւոր են քան Աւագ Ուրբաթի տխուր և ցաւագին դէպքերը, և թէ յաւիտենական կեանքը աւելի զօրաւոր է քան մահը ինքնին: Իր Տիրոջ գերեզմանէն դարձին Մարիամ Մագդաղենացի այլեւս չէր լար ու ողբար, որովհետեւ ան իր իսկ աչքերով տեսած էր իրա՛ւ կեանքը, իր Յարուցեալ Տէրն ու Փրկիչը: Երբ ան Քրիստոսի աշակերտներուն կու տար իրենց Վարդապետին յարութեան աւետիսը, անոր ձայնին մէջ այլեւս հեկեկոցի փոխարէն կար յաղթանակի երջանկութիւնը, «Զի տեսի զՏէրն», ես տեսայ Յարուցեալ Տէրը, ես տեսայ յաւիտենական կեանքը: Զատիկը սիրելիներ, Աստուծոյ մեր մէջ դրած մարդկային վիշտի զգացումը չէ որ կը հեռացնէ մեզմէ, այլ Յարութեան ճշմարտութիւնն է միայն, որ կը յաղթանակէ մեր վիշտերուն և ցաւերուն:

Հայ ժողովուրդը եւս, սիրելի ուխտաւոր եղբայրներ ու քոյրեր, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հիմնադրութեան օրը, նման Մագդաղենացի Մարիամին, դարձաւ առաջին պետականօրէն Քրիստոնէութիւնը ընդունած ժողովուրդը, որ ուրիշ ազգերու տալով Աստուածորդւոյն և մեր Փրկչին Յարութեան աւետիսը, կը յայտարարէր. «Զի տեսաք զՏէրն», «Մենք տեսանք Տէրը». Ամէն:

Ձեզ և մեզ մէծ Անտիս, Քրիստոս Յարեալ ի սէռելոց:

